

ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐԲԵՐ

ԱԶԸՐՐԲԷՅՋԱՆՆԵՐ *)

5 Իրանեան թուրքի տիպը

Մինչև այժմ ինչ որ ասացինք իրանեան թուրքերի քաղաքական ու ընկերային անցեալի վերաբերմամբ՝ պարզ ցոյց է տալիս որ դժուար կարող է խօսք լինել թուրքական տիպիկ առանձնայատկութիւնների մասին: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, եթէ մանաւանդ աչքի առաջ ունենանք այր ու կին ստրուկների դարաւորներմուծումը, որով թուրք արեւնը խառնուել է շարունակ դրացի արիական տարրերի հետ. ինչպէս են կովկասցիները, քիւրդերը, հայերը և իրանցիք: Եթէ սրան աւելացնենք նաև կլիմայական, կրօնական ու հանրային գործօնների ուժեղ ազդեցութիւնը, կը հասնենք այն համոզումին, որ ամենալաւ դէպքում մի սաստիկ խառնուած տիպ է մեր առաջ եղածը, և որ սակայն դեռ կրում է իր վրայ դուռ թուրքայինի տկընյայտնի հետքերը:

Այս իմաստով միայն ներելի է ու կարելի մի յատուկ ժարմնական կազմ ընդունել իրանեան թուրքերի համար. մի կնգմ, որ իսկոյն իր վրայ է հրաւիրում հետազօտողի ուշքը հէնց որ աչքի եւ առնում ազըրբէյջանցուն նրան շրջապատող համեմատօրէն դուռ իրանական տիպերի միջից, որոնց թուին եւ հաշոււմ իմ շիրազցիներին:

Այդտեղ արդէն իսկոյն դուռ է ցայտում իրանեան թուրքի ընտրողումը, որ հետեւալ կերպով է արտայայտում եւ. Պօլսկ, որ Պարսկաստանի տեղ ու ցեղի հիմնական ճանաչն է: «Իրանեան թուրքօ-թաթարի գանգը իրանեցու հետ համեմատած աւելի քիչ է ձուածե, դէմքը աւելի լայն ու աւելի նուազ արտայայտիչ, ունքերի կամարը աւելի ուղիղ է և քթի վրայ չէ միացած իրար. աչքերի ճեղքը չունի այն նրբութիւնը, կո-

*) Տես «Մուրճ», № 11—12

պերը աւելի հաստ են, բիբը գորշ. բիթը կարճ ու հաստ թէ արժատում, թէ՛ ոռնգերը. ծնօտն ու այտոսկրները աւելի լայն ու աւելի մկանուտ. շրթունքը մսոտ, ձեռնուռը նուազ շնորհալի ու կմաղքը աւելի զանգուած: Հասակը սովորաբար աւելի բարձր է պարսիկից, ոսկրներն ու մկանունքը աւելի ուժեղ:»

Նոյն տեսակի են և Զէյղլիցի տուած նկարագիրը Անդրկովկասի թուրքերի մասին, որոնց արտաքինի վրայ նա՛մի ընդհանուր ու տիպիկ բան ոչինչ՝ չի գտնում: Շատ հասկանալի պատճառով նրանք ներկայացնում են զուտ թուրքայինի ու մաքուր հընդերու պարմագծութեան մի երփներանգ խառնուրդ, ուր զուտ թուրքայինը առանձին շատ հազիւ է պատահում:

Սրան համապատասխան է և լիմ դիտողութիւնը, միայն կամենում եմ աւելցնեմ, որ Իրանի հիւսիսային սահմանագծի երկայնքով՝ Ազըրբէյջանի ու Նորասանի թուրքերը շատ աւելի են պահած իրանց ազգային տիպը, քան օրինակ հարաւային Պարսկաստանի բաշկինները, որոնց երկարաւունք բիթը, կրակոտ աչքերը ու ձիւթի մնան սև մաղերը արդէն խիստ են յիշեցնում արեակէզ հարաւեցուն:

6. Իրանեան թուրքի կենցաղը

Իրենց կեանքի եղանակով իրանեան թուրքերը երկու խմբի են բաժանուում, նստակեաց ու թափառական, կամ կիսովին թափառական: Առաջին խմբին պատկանում են Ազըրբէյջանի, Շամսէի, Թեհրանի, Իրանի ու մասամբ էլ Նորասանի այն թուրքերը, որոնք Սելջուկների արշաւից սկսած, զուցէ նոյնիսկ աւելի վաղ, իւրացրել են իրանեան ժողովուրդների կենցաղը, հաստատուել են գիւղերում և քաղաքներում, ու պարապում են առուտորով, արդիւնագործութեամբ ու հողի մշակումով: Մանաւանդ հողագործութիւնը, քանի որ անասնապահութիւնից բնական կերպով անցել են դրան, մինչդեռ առուտուրի ու արդիւնագործական մասում ետ են մնացել ու ճնշուել են շրջապատող պարսիկներից:

Իրանի ամբողջ հիւսիս-արեւմտեան բաժնում գիւղի ժողովուրդը բացառաբար թուրք է. Ազըրբէյջանում ու Շամսէում նոյնն է նաև քաղաքների վերաբերմամբ, մինչդեռ միւս տեղերում քաղաքի բնակչութիւնը կազմուած է խառն պարսիկներից ու թուրքերից:

Սակայն այս երևոյթը Սեֆիտների ժամանակից է սկսած միայն և աւելի հաստատուել է Գաշարների տիրապետութեան

միջոցին, երբ թուրք զինուորական ու պաշտօնայ դասակարգը, հրապուրուած հանգիստ կեանքից, աւելի ու աւելի վարժուեց մի հաստատ անկիւն ունենալու, և խաղաղութեան ժամանակ սուրը ցած դրեց արօրը վերցնելու համար: Այս փոխանցումը, ինչպէս երևում է, հեշտ չէ կատարուած, քանի որ դեռ մինչև այժմ էլ Ազրբեյջանի ու Շամսէի թուրքը շատ է կապուած հայրաքի սովորութեանը, այսինքն ամառը դէպի դաշտակներն ու պարտէզները քոչելուն. ամառը բաղաճների կէսը մեռածի ու թողածի պէս է:

Գալով թափառականներին՝ չերեակայէնք, որ դեռ երէկ տափաստաններից իջած ու կուլտուրական շրջանակի մէջ մտած ցեղեր են դրանք, որ թափառում են մշակութեան ազատ հող չգտնելով: Ո՛չ. նրանց թափառականութիւնը՝ դարերի հաշիւ ունի արդէն, մասամբ ծնունդ պատմական պատահարների, մասամբ էլ արդիւնք դէպի նստակեաց կեանքը ունեցած թուրքի ազգային հակակրօնքի, որը խիստ է աչքի ընկնում. պատմութեան մէջ թուրք ցեղերի ենք հանդիպում, որոնք ոչ մի կերպ չեն կարողացել հանգիստի գան:

Դրա համար էլ Իրանի ամեն մի շարժուն թուրք ցեղի, կամ ինչպէս ասում են կարճօրէն՝ Իլատի ¹⁾ թափառման վայրը միայն իր գլխաւոր գծերովը կարելի է որոշել: Այսպէս օրինակի համար Շահսէները ամենից շատ գտնւում են Անդրկովկասի մեր արդէն յիշած տեղերում, բայց հանդիպում են նաև Շամսէում ու Թեհրանի դաւառում: Խօջա-Ալի, Բէգ-Գիլի ու Շէյխլու ցեղերին պատահում ենք նաև Ղարաբաղում, Մահալադլուններին Մարաղայում, Ջանրէգլուններին, Իմամլուններին, Աուշարներին, Ուզանլուններին ու Քաջարներին Մազենդարանում, վերջապէս Քաջախներին ու Ալլահվերդիներին Պարսկաստանի հարաւում:

Այս թափառականների շարքն է դասում մի պարսիկ հեղինակ նաև Քարադէօղլու, Բահարլու և Ինանլու ցեղերին, երբ հետեւալ կերպով է մանրամասնում թուրք թափառականներին: Քաջախներին բաժանում է երկու մասի՝ քաջախներ ու խալաջներ. նրանց թիւը միասին մօտ 60.000: Ինանլուններին բաժանում է նորից երկուսի՝ Չիհարգեհ-Չերիզ և Ինանլու, միասին առած 12.000 հոգի, միջդեռ բահարլունների թիւը 12.500 հոգի է հաշւում:

Թէև ընդհանուր անունով այս բոլորին իլատ այսինքն

1) Իլատ առաջանում է թուրքերէն իլ՝ մարդիկ, մողովուրդ բառից, որին արաբերէն յոգնակի շինող առ մասնին է կցուել:

Թափառական ցեղ ենք կոչու՞մ, բայց ես դիտել եմ, որ իրանց նիստ ու կացով բաւական տարբերու՞մ են իրարից: Միջին Ասիայի իմաստովը առած «Թափառական» բառը իսկն ասած իրանական այդ շարժուն ժողովուրդներից և ոչ մէկ հատուածին չի կարելի տալ: Ամենից առաջ չկայ այստեղ այն ընդարձակ արօտներն ու տափերը. իրանց հօտերն էլ շատ են չնչին, եթէ կիրգիզների ու թուրքմանների չափովը չափենք: Մեծ մասով ոչխար են պահում, քիչ ուղտ, աւելի ևս քիչ ձի: Սրանց ոչխարը մի միջին աստիճան է կազմում միջինասիական դաւկաւորի ու անատոլիան ոչխարի մէջ. իսկ ձին մի խառնուրդ է նախկին դաշտածիռու ու արաբական նժոյգի, որ իր ընատիպից շատ ետ է մնում թէ՛ իր դիմացկանութեամբ, թէ՛ ժուլութեամբ: Իրանց լաւագոյն ձիերով յայտնի են շահսէնները, քաջարները և առշարները:

Ընդհանուր աչքի առնելիս՝ Իրանի թուրք Թափառականները մի ողորմելի տպաւորութիւն են անում դիտողի վրայ: Աղքատութիւն ու խեղճութիւն է դուրս հայում նրանց մազից գործած լայնածիփ վրաններից, որին արեւելքում Արրահամի վրան են ասում: Ո՛չ թաղիքն է սիրուն, ո՛չ վրանի գօտին է զարդարուն, ոչ ցիցերի գլխին մի ծածանուող սինվօլ, ոչինչ ոչինչ չի հրապուրում նայողի աչքը. իսկ երբ գլուխդ կւացրած մտնում ես ծուխից սևացած վրանի ներսը, իզուր ես որոնում գոյն-դգոյն գորգեր, հարուստ զգեստներ ու սիրուն քանդակազարդ ամանեղէն: Եւ իսկոյն պարզ է դառնում քեզ, որ առաջդ եղածները այն թուրքերիցն են, որոնց Թափառավայրը դարերէ իվեր սեղմուել է ու փոքրացել, և որ շրջապատուած նստակեաց ժողովուրդներով, արդէն վաղուց կորցրել են իրանց նախկին իսկական նիստ ու կացը, առանց թողնել կարողանալու Թափառումի իրանց յաւիտենական սէրը: Ամբողջ ամառը, կարելի է ասել, որսում են նրանք ամեն մի կտոր արօտը ձորերի խորքում ու ժայռերի գլխին: Անասնապահութեան տուած արդիւնքը չնչին է, և ուրիշ Թափառականներին յատուկ աշխուժ կեանքի հետքն անգամ չկայ նրանց մօտ: Միայն մասամբ մրնացել են դեռ կլանային կապերը ու իլխանի (ցեղապետի) հանդէպ իրանց ունեցած կոյր հնազանդութիւնը: Իլխանի հրամայեց թէ չէ, դէնքի են դիմում ըլուր դէնք կրելու ընդունակ մարդիկն ու կանայք. և դրանով է որ Քաջքայի ցեղապետները մինչև նորագոյն ժամանակներս երկիւղ են ազդում պարսիկ կառավարութեան: Ոմանք իր ցեղակիցների աչքում շատ աւելի բարձր յարգ ունի, քան ժամանակաւոր պարսից Շահը, որ զգուշանում է նրանց ներքին գործերի մէջ խառնուելու: Նրանց

նահապետական կազմի մէջ շատ քիչ բան է փոխուած ոչ միայն Իրանում, այլ նոյնիսկ ուսական հողի վրայ:

7. Արիական կուլտուրայի ազդեցութիւնը

Մի ժողովուրդ որ ութը դարէ ի վեր անշատուած է իր ազգակից խոշոր մասից, որ ապրում է հին-իրանեան ոգով սընուած մի հասարակութեան ծոցում և որի զարգացման վրայ բացի գրանից խիստ մեծ ազդեցութիւն է ունեցել շիի կրօնը մասնաւորապէս, շատ հասկանալի է ու բնական, որ մի այդ տեսակ ժողովրդի բուն թուրքական վարքն ու բարքը մեծ փոփոխութիւնների է ենթարկուած լինելու: Ինչպէս որ իր լայն ու կոպիտ ձևերով ու դժուարաշարժութեամբն է որոշուած թուրքը մարմնապէս իրանական տեղացիներից, այնպէս էլ կարելի է ասել նոյնը նրա հոգեկան յատկութիւնների վերաբերմամբ:

Բայց դարաւոր յղկումն ունրբացումը անշուշտ հարթել են քիչ նրա ազգային ընաւորութեան մի քանի խիստ կոշտ անկիւնները. և իր արեւմտեան ու հիւսիս-արեւելեան ազգակիցների հետ համեմատած, իրանեցի թուրքը անտարակոյս ներկայանում է իրրեւ կրթութեան ու նուրբ ձևերի տէր մի մարդ: Նա իւրացրել է մի քանի ընթացիկ քաղաքավարի ձևեր և չի կարելի ուրանալ որ իր վարմունքի մէջ կայ մի որոշ աստիճանի յղկում. թէև մեծ մասով դա արտաքինն է միայն և հէնց որ քիչ կոտրուած և կճեպը, իսկոյն թուրքը երևան է գալիս: Հակառակ իր փքուն-քաղաքավարի խօսակցական ձևերին, հակառակ իր հագուստի, շարժման ու վարմունքի շնորհալի լինելու ձգտումին, թուրքը իսկոյն ջոկուած է հարաւային իրանեցուց: Նրբամիտ, ճկուն ու խորամանկ երևալու իր բոլոր ջանքը կորչում է նրա բնածին բացարտութեան ու տափակութեան առաջ:

Այդ նկատելի է նոյնիսկ Թաւրիզի, Թեհրանի ու Համադանի քաղաքացիների վրայ, չնայելով իրանական քաղաքակրթութեան այդ կենդրոնների անմիջական ազդեցութեանը: Մինչդեռ զիւղացին շատ աւելի ցայտուն ազգային գծեր է պահած և երբեմն իր վարքն ու բարքը վառ կերպով յիշեցնում է տափաստանների թուրքմանին:

Այդ նմանութիւնը տարածուած է նաև ընտանեկան կեանքի որոշ սովորութիւնների վրայ... այսպէս օրինակ, մի քանի օրհնանք բոլորովին նոյն խօսքերն են գրեթէ. նոյնն են ծէսերը երեսայ ծնելիս, հարս բերելիս. և մանաւանդ հիւրասիրու-

Թեան օրէնքը, որ Իրանի թուրքը շատ աւելի խղճմտօրէն է պահում, քան պարսիկը: Այդպէս էլ թուրքի խօսքը շատ աւելի վստահելի է, և նոյնիսկ իր սուտը, կոպիտ ու ձախլիկ, շատ աւելի նուազ է վտանգաւոր, քան ողորկ ու խորամանկ պարսկինը: Ունայն հրապոյրի ու շլացուցիչ շքեղութեան իր ունեցած հակումովը պարսիկը գուցէ գրաւում է երեքնն, բայց իսկական առնացի արժանաւորութիւնը և վճռականութիւնը թուրքին է յատուկ: Իր այդ յատկութիւններին է արդէն նա պարտական դարերէ իվեր Իրանում ունեցած իր տիրող դերը, ուր իսկն ասած պատերազմիկ տարին է կազմում, քանի որ Շահի ամբողջ բանակը ստուար մեծամասնութեամբ թուրքերից է բաղկացած:

Այս բոլորը աւելի ևս ճիշտ է իրանեան թուրքերի թափառական մասի վերաբերմամբ: Արդէն միայն այն հանգամանքը, որ մի քանի ցեղեր, հակառակ տեղական դժուարութիւններին և ընկերային ուժեղ ազդեցութեան, չեն վարժուել նստակեաց կեանքի, ամենից աւելի է մատնում այդ մարդոց իսկական թուրք լինելը: Սրանց միայն վերնազոյն ծայրերին է դիպել պարսկական կուլտուրան, մինչդեռ մասսան միայն արտաքինովն է տարբերւում տափաստանների իր ազգակիցներից և չի զանազանւում նրանցից ոչ իր մտածելու եղանակովը, ոչ էլ իր սովորոյթներովը: Անսանձ է նրանց հակումը դէպի արկածները, կռիւն ու թալանը՝ կեանքի իդէալ, իսկ օրեր ու ամիսներ տևող անդործ կեանքի միօրինակութիւնը լեցնում է միայն մի զրաղում՝ իրանց ձիերի ու զէնքերի խնամքը: Թէև Սաադիի, Հաֆիզի և միւս պարսիկ բանաստեղծների իմաստուն խօսքերը ման են գալիս բերնէ բերան, բայց նրանց սլորտում քանդակուածը հին-թուրք նախնական առածներն են, որոնց վրայ և չափում են իրանց գործերն ու կեանքը:

Մի զարմանալի երևոյթ է ժողովրդագրութեան էջերում թուրքի այդպէս պինդ կպած մնալը իր հին ծէսերին ու սովորոյթներին. յամենայն դէպս շատ քիչ օրինակներ կան, որ երկու հակառակ ժողովուրդների 600 տարուայ անընդհատ ու սերտ շփումից յետոյ փոքրամասնութիւնը այդ աստիճանի քիչ ենթարկուած լինի մեծ մասի ազդեցութեանը, ինչպէս այդ տեսնում ենք Իրանի թուրքերի վերաբերմամբ: Նոյնիսկ տասնհակ տարիների վարժութիւնից յետոյ, թուրքը միշտ օտարի շեշտով է խօսում պարսկերէնը և միշտ սխալ. մի օրէնք, որից նոյնիսկ տիրող շահերը բացառութիւն չեն կազմում:

Չնայելով ընդհանուր կրօնի և ընդհանուր քաղաքական շահերի կապին, այդ երկու տարրերը փոխադարձաբար ատում

են իրար: Պարսիկի համար թուրքը դեռ միշտ այն հին բարբարոսն է ու ատելի արարածը, ինչպէս որ նա նկարագրուած է Շահ-Նամէում: Թուրքն էլ իր կողմից արհամարհում է պարսիկին իբրեւ մի վախկոտ: Այո, ազրբէյջանի առածը շատ ճիշտ է ասում. «Թուրքին ու պարսիկին արա հազար կտոր, նետի՛ր կաթսան ու եփի՛ր. եփի՛ր ամիս ու տարիներ, նրանք նորից չեն միանայ նորից կը կարաւ իրարից ջոկեալ»:

8. Լեզուն ու գրականութիւնը

Գալով իրանեան թուրքերի լեզուն ու գրականութեանը, հասկանալի է, որ ամենից աւելի այստեղ է երևում նոր-պարսկականի կրթիչ ազդեցութիւնը. այսինքն թուրքերէնի շարագրութեան, գրական տեսակների ու փոխաբերութիւնների մէջ պարսկականը շատ աւելի տիրող է, քան թէ թուրքմաներէն ու օսմաներէն գրականութեան մէջ: Բայց իբրեւ բարբառ ազրբէյջանի լեզուն սաստիկ մօտիկ է օսմաներէնին, մանաւանդ նրա այն գաւառաբարբառին, որ խօսում են Անատոլիոյ մի մօտիկութիւն, որ նախորդ դարերում շատ աւելի է եղած, քան այժմ, որի հիման վրայ կարելի է ընդունել թէ 12-րդ ու 13-րդ դարերում այդ երկու հիմա իրարից բաժանուած բարբառների մէջ ոչ մի տարբերութիւն չէ եղած, և թէ օսմանցին ու իրանի թուրքը այն ժամանակ իսկապէս միևնոյն ցեղի անդամն են եղած և մօտիկ ազգակից այս օրուայ թուրքմաններին:

Այս ենթադրի ճշմարտութիւնը ամենից լաւ ապացուցւում են գոյթիւն ունեցող լեզուական յիշատակարանները: Այսպէս՝ եթէ համեմատենք 13-րդ դարից մեզ հասած սելջուկեան ոտանաւորները Նեշրի պատմարանի լեզուի հետ, որ 15-րդ դարի երկրորդ կիսումն է ապրել, և այդ երկու նմուշների դէմը բռնենք արդի ազրբէյջանի լեզուն, իսկոյն պարզ կը լինի նոյնիսկ թուրքերէնին չափազանց հարեանցի ծանօթ եղողին անգամ, որ այդ յիշուած երկու հին թուրք բնագիրները թէ բերականօրէն և թէ բառարանով սաստիկ նման են իրանեան թուրքերի արդի բարբառին:

Մասնաւոր կուտուրական ազդեցութիւնների ու յետագայ ուրոյն զարգացման շնորհիւ օսմաներէնը հետզհետէ հեռացել է ընդհանուր բարբառից, մինչդեռ ազրբէյջանի լեզուն իր էական կէտերում անշարժ է մնացել: Օսմաներէնը, այսպէս ասենք, նրբացրել է իր հնչական սխեման ու պահել մի քանի ձևեր, որոնք այսօր միայն Ուիլդուրերէնի մէջ կարելի է գտնել: Մինչդեռ մի մասնաւոր մշակման չենթարկուած ազրբէյջանի

լեզուն, ընդհակառակը, պահել է կոկորդային ու շըչող կոշտ հնչիւնները մասամբ էլ այնպիսի ձևեր ,որոնք այդ լեզուն մի փոխանցող միջին աստիճանի են վերածում արևմտեան ու արևելեան թուրքերէնի մէջտեղում և այդ բարբառի որոշիչ յատկանիշն են կազմում:

Այսպէս օրինակ, օսմանցու Գ-ն ազըրբէյջանցու բերնում խ է միշտ. նա ասում է բնիս (նայիր), չոխ (շատ) փոխանակ ասելու բաք, չոք: Օսմանցու գելմիշ (եկած), գէօրմիշի (տեսած) փոխարէն նա սովորական խօսակցութեան մէջ գործ է ածում գելիւր-մէն, գէօրիւր-մէն. բացասական գելմէմ, գէօր-մէմ ձևի փոխարէն ասում է գելմերեմ, գէօրմերեմ, մի խօսքով այն տեսակ տարբերութիւններ, որ այդ երկուսին կարծես դարձնում են նոյն բարբառի երկու ենթաբարբառը: Եւ իրաւ օսմանցին ու ազըրբէյջանցին շատ աւելի հեշտ են իրար հասկանում, քան թուրքմանին:

Պարսկական գրականութեան իրանեան թուրքերի վրայ արած ազդեցութիւնը աչքի առաջ ունենալով՝ ասելն իսկ աւելորդ է, որ զուտ թուրք ազգային երկերի մասին հագիւ կարող է խօսք լինել: Նախ թուրք գրագէտների և ուսումնականների թիւը սաստիկ չնչին է իրանում. եղողներն էլ հետեւելով տիրող գրական թօնին ընդհանրապէս գործ են ածում պարսկերէնը: Բացառութիւն են կազմում մի քանի բանաստեղծներ, ինչպէս Ֆուզուլի, Բիդլի, Մեշրեք, էլեգիայի ու կրօնական խաղերի մի քանի երգիչներ, այլ և երգիչների այն տեսակը, որոնց բանաստեղծութիւնները Աղօլֆ Բերթէն հաւաքել է ու հրատարակել: Վերջիներս իհարկէ միայն պատահամար ծանօթ դարձած աշուղներ են 18-րդ ու 19-րդ դարերից: Դրանց հետեւալ ցանքն է տալիս Բերթէն.

1. Ախունդ Մօլլա Պենաս Վաքիֆ, մեռած է 1747-ին:
2. Գասիմ բէգ Շաքիր, ծնած է 1789-ին:
3. Մեսսիհա, Վաքիֆի ժամանակակից.
4. Գամբեր, 19-րդ դարի 20-ական թուերին:
5. Քերեքլայի Արդուլլահ Զանի, մեռած է 30-ական թուերի սկիզբին:
6. Բաբա բէգ, Գասիմ բէգի ժամանակակից:
7. Մեհդի բէգ:
8. Միրզա Ֆեթ Ալի Ախունդով, ծնած 1812-ին:
9. Աշիկ Փերի, մի բացառիկ տաղանդի տէր բանաստեղծուհի, մեռած է 1833-ին:

Բայց որ այս տեսակ աշուղներ եղիլ են և շատ աւելի վաղ ժամանակներից սկսած՝ երևում է հէնց այն հանգամանքից, որ մի քանի ցեղերի գրի ծանօթ խաները իրանց բանաստեղծական արտադրութիւնները գրեթէ քացառաբար մայրենի լեզուով են յօրինում, քանի որ շատ քչերն են միայն վարժ պարսկերէն լեզուին ու չափին:

Թուրք ստեղծագործութիւնների մի քանիսը միջին-ասիական աշխարհահայեացքի կնիքն են կրում իրանց վրայ. այսպէս օրինակ Ֆուզուլիյի և Ալլահ-Նար-ի երկերը, որոնք թուրքմանների մէջն էլ իրանց ընթերցող են գտնում, բարբառի թեթև փոփոխութիւնից յետոյ Մի քանիսն էլ սաստիկ նման են անատոլիան թուրքերի ժողովրդական բանաստեղծութեան: Մի էական բացառութիւն կազմում են միայն Դէօրօղլու անուն տակ ծանօթ հերոսական առասպելները, որոնց մասին ցածր խօսք է լինելու դեռ, և որոնք մասամբ մի դարի հնութիւն ունեցող երկեր են լեզուն քիչ փոփոխած, մասամբ էլ կրում են իրանց վրայ գուտ թուրքման ժողովրդի ոգին նոր ժամանակի յաւելումներով:

Բերմնը մի քանի օրինակներ այդ բանահիւսութիւնից: Առաջին երեքը հանում եմ իմ մի ձեռագիր երգարանից, որ գնել եմ ուղևորութեանս միջոցին Խոյի բաղարում և մինչև այժմս էլ գտնւում է մօտս.

1. Վարսակի

Է՛յ էրէններ բու գիւն բիր ջեմալ գէօրդիւմ
Տեփեկի իմլասի օլ զատա բենդէր
Միւմբիւլ մեղանինին լուհին օխըղըմ
Դիստի քուզրեսու կազմիշ այեստէ բենդէր

Այսինքն.

Ո՛վ մարդիկ, այսօր մի սիրուն եմ տեսել
Աստուածային պատկերին էր ինքը նման,
Իր հրաշալի գիւմբիւլ գէմքն եմ կարդացել
Աստուծու ձեռքի գրածին էր նման:

2. Ղազելի կալիան

Կալիան ալմիշ էլինէ է՛յ գէօղիւմ օլ կարի գէօր
Հիմնեղին օլմուշ օթուրմուշ կար իլէն աղեարի գէօր
Օդ վէ սու թօփրաք վէ ելգիր հունքի խսրատի նումուշ

էօզինի նիսբետ կայիրմիշ աղամի հուշիեարի գէօր:

Այսինքն.

Ղալեանն առել իր ձեռքը, ո՛վ աչքս, իմ եարըս տես,
Եարիս հետ առած ու նստած ախոեանքս տես,
Կրակ ու ջուր, հողն ու հովը թող լինին վկայ,
Ինձ օրինակ առած զգաստութիւնքս տես:

3. Վարսակի

Ջանիմդէ բուգիւն ջանիլէ ջանան բիրիքիբդիր
Հեմդեմ օլուբան դերդիլէ դերման բիրիքիբդիր
Բեն ըլտըէի ֆանուս օլուբան վադի՝ աշըկդէ
Եանդիրդի բենի նալէ վէ ֆիգան բիրիքիբդիր

Այսինքն.

Հոգուս այսօր հոգիս ու սէրն են միացել,
Իրար մտերիմ վիշտս ու դարմանն են միացել,
Միտդ հովտում մի մար ճրագ էի ես,
Վառեց ինձ, զանգատն ու հառաչն են միացել:

Ինչպէս երևում է այս բնագիրներէց, Աղըբէյջանում խիստ տարածուած այս ոտանաւորների լեզուն գրեթէ բնաւ չի տարբերուում օսմաներէնից, բացառութիւն է գուցէ մի քանի հնչական զանազանութիւնները, այլ և վարսակի (=ոտանաւոր, զագել) բազը, որ միայն արեւելեան թուրքերէնի մէջն է պատահում:

Արդ՝ ինչ վերաբերում է միկնոյն ժամանակ ազգային հերոս ու ազգայն երգիչ Քէօրօղլուի երգերի էպիկ հաւաքածուին, գրանց ես լսել եմ շատ զանազան տեսած երգելիս թուրքմանների տափաստաններից սկսած մինչև Միջերկրական Մովը. այդտեղ Քէօրօղլուն մերթ շիրթ է, մերթ սիւննի, երբեմն տափաստանի որդի, երբեմն շահի ծառայութեանը, երբեմն էլ Պոլսի Սուլթանին իբրև ռազմիկ, բայց միշտ իբրև նախատիպ նախկին թուրքի և իբրև ճշմարիտ ներկայացուցիչ թուրանի հերոսական ոգու: Ամեն կասկածից դուրս է, որ Շահ-Նամէի չափ արածուած այդ հերոսական առասպելի հիմնական նիւթը միասին են բերել թուրքերը իրանց տափարակ նախահայրենիքից: 17-րդ դարի երկրորդ կիսում առաջացած չէ դա, ինչպէս ենթադրում է Պօղկօ, որովհետև Քէօրօղլուի առասպելը

կայ և էօզրէզների մօտ և Խիվայի թուրքմաններէ, նոյնպէս սաստիկ տարածուած է Արալի ափին ու Կասպից Ծովի հիւսիսային ափերում ապրող կազակների մէջ: Նաև նոյն կազմը ունեցող ու նոր ժամանակի ծնունդ «Ահմեդ Եոսսուփ»-ը, որից ես նմուշներ եմ բերած իմ «Չաղատայերէն լեզուական ուսումնասիրութիւններ» աշխատութեանս մէջ, կարծես թէ Քէօրօղլուի նմանութեամբ շինուած մի հետեոյութիւն է միայն:

Միջին Օքսուսից մինչև Սիրիա թուրքերի մէջ սաստիկ տարածուած այդ հերոսական առասպելը լեզուի տեսակէտից շատ չնչին արժէք ունի, բայց խիստ կարևոր է իբրև ազգային քարաքտէրիստիկ: Բնագրից թարգմանում ենք երկու փոքրիկ կտոր, որ վերարեբուծ է հերոսի գորշ-ձիուն (քիրատ):

1.

Քիրատսիդ դիւնեալար սանա հարամդիր
Ինան Քէօրօղլու

Քիրատ բի էլինդէն գիտտի
Վուր բաշինի Քէօրօղլու

Քիրատի Ալլահդան իստէ
Քիրատիմ կոյրուդի գիւլգեստէ

Այսինքն.

Առանց Քիրատի հարամ է քեզ աշխարհըս
Հաւատան Քէօրօղլու.

Քիրատդ որ ձեռքից կաւ
Տուր գլխիդ Քէօրօղլու.

Քիրատդ Աստծուց խնդրի
Իր պոչը փունջ վարդի:

2.

Թիւրքիստան իլինդէ էլի սալդիդիմ
Իւմրիում նէն բեսլեդիդիմ Քիրատ գէլ.

Սեն դիւմէնին բիր թէկկէնին էլինդէ
Իւմրիւմ նէն բեսլեդիդիմ Քիրատ գէլ.

Բիր բատման դեմիրդէն չեքտիմ գեմինի
Աջուկլան իւչ գիւն եմէզ եմինի,

Քիրկ աղաջդան բիլինդիւմէզ նեմինի
Իւմրիւմ նէն բեսլեդիդիմ Քիրատ կէլ:

Այսինքն.

Թուրքիստանի կողմերում քեզ ձեռք հմ ձգել
 Կեանքովս սնուցած, Բիրատ, եկ.
 Մի թշնամի թեքքէի դու ձեռքն հս ընկել,
 Կեանքովս սնուցած Բիրատ, եկ.
 Մի բաթման երկաթից շինել հմ սանձդ,
 Կերդ չես ուտում երեք օր սովածըդ.
 Քառասուն կանգուն է աննման գնացըդ
 Կեանքովս սնուցած, Բիրատ եկ,

Քէօրօղլուի այդ երգերից զատ կան և հարսանեկան երգեր, աշխարհիկ երգեր, պարաբեշներ ու առածներ, որոնք ապրում են իրանեան թուրքերի բերնում և որոնք ամբողջովին թուրքման այսինքն միջին-ասիական ծագում ունին: Իրանական ազդեցութիւնը ինչպէս մարմնի վրայ միայն արտաքին է եղած, այնպէս էլ պարսիկների դարաւոր ուսուցչութիւնը միայն երեսանց է ազդած թուրք վարք ու բարքին ու մտածելու եղանակին: Շիի թուրքերի ու սրանց հիւսիս-արեւելեան սիւննի եղբայրակիցների մէջ եղած կոյր թշնամութեան հակառակ, հակառակ այն անսահման կրօնական ատելութեան, որ այդ երկու աղանդները 400 տարիէ ի վեր բզրկտում է, նորից Իրանի թուրքը շատ աւելի մօտ է իր միջին-ասիացի ազգակցին, քան օսմանցին: Դրա համար էլ օսմանցին քննադատում ու ծաղրում է սրանց լեզուն ու բարքերի կոպտութիւնը, թէև վերջիններս ամաչելու բնաւ պէտք չունին, քանի որ բուն ազգագրական տեսակէտից հաւատարիմ են ֆիացել իրանց ծագումին, մի բան, որ օսմանցու համար իհարկէ ասել չի կարելի:

Անշուշտ իրանեան կուլտուրան թուրքերի բարքի ու մտածման վրայ էլ նրբացնող ազդեցութիւն է արած, որը մասնաւորապէս նկատելի է մի քանի ժողովրդական բանաստեղծութիւնների մէջ, ուր նախնական թուրք պարզ տուգան միանալով իրանեան արուեստին առաջացրել է այնպիսի սիրուն երկեր, ինչպէս օրինակ հետեւեալն է.

1. Այ դօլանիւր բատմակա
 Եուղում գելիւր եատմակա
 Էլլերիմի էօգրէնիբդիւր
 Մէմէլերնի օյնատմակա:

2. Այ դէօգիւլիւմ, իլտիզիմ
Գեւին դէօգիւլիւմ, կիզիմ
Գափուդա դուրան օղլան
Գեւ իշերի հալկիզիմ.

3. Արաքչինի հան գօհար
Գէօթիւրիւր օ հան գօհար
Բիր էօփիւշտիւն էօտիւրու
Իւրեզիմէ կան քօհար:

4. Բու դազնիւ օ իւզիւնդէ
Ջիրան օտար դիւզիւնդէ
Մեն հարիմի տանիրըմ
Քօջա հալ վար իւզիւնդէ:

Այսինքն.

1. Լուսինն է մօտ թեքուելու
Քունս է եկել քնելու
Ձեռքերս մէկ վարժուել են
Ստինքներդ խաղցընելու:

2. Լուսին չեմ ես, մօտդ եմ ես,
Աղջիկ եմ ես, հմրս չեմ ես.
Դու, դռանը կանգնած տղայ,
Ներս եկ, մեն-մենակ եմ ես:

3. Արախչինը ծուռ է դնում
Դընում էն կողքն է դնում
Մի համբոյրիդ կարօտին
Սիրտս արիւն է դնում:

4. Մի նշան իր երեսին,
Ջէյրան դաշտի երեսին,
Ես իմ հարըս կը ճանչնամ
Պոշոր խալ կայ երեսին:

9. Իրանեան թուրքերի հաւանական թիւը

Ինչ վերաբերում է իրանեան թուրքերի թուին, պարզ է լինելու ընթերցողին, որ այսպեղ խօսք լինել կարող է միայն

Ռուսիայի իշխանութեան տակ գտնուող Անդրկովկասեան թուրքերի մասին, քանի որ բուն Իրանում ստատիստիկան կատարելապէս բացակայում է, ուր ժողովրդագրութիւն մինչև հիմա ոչ միայն չկայ, նոյնիսկ երբէք փորձուած էլ չէ:

Փօն Զէյդլիցի տուած նորագոյն տեղեկութիւնների վրայ յենուելով Անդրկովկասի թուրքերի թիւը հետեւեալն է (19-րդ դարի վերջին քառորդ).

Դաղստանում	19.700
Բաքուի նահանգում . . .	304.800
Գանձակի նահանգում . . .	357.900
Նրեանի նահանգում . . .	213.900
Թիֆլիսի նահանգում . . .	63.700
Ջաբաթալի շրջանում . . .	15.700

Ընդամենը 975.700 հոգի

Այսինքն մօտ մի միլիօն, որի մէջ է հաշուած կրօնական ու ազգային տեսակէտից Ազրբեյջաններին սերտ ազգակից Կարա-փափախներին, մի կէս թափառական ժողովուրդ մօտ 6500 հոգի, որոնք ապրում են Ալեքսանդրապոլի ու Ղարոի մէջտեղը: Այդ թուի մէջ է հաշուած նաև թերեմէները, որոնք իրանց թուով առնուազն Կարա-փափախների չափ են ու թափառում են Ախալցքիայի ու Ալեքսանդրապոլի մէջերը, թէև յաճախ նրանց աւազակային արշաւները համարւում են մինչև օսմանեան քիւրդերի հոգը. որոնք դեռ նախնի ժամանակներից այդ կողմերի ահարկու աւազակներն են եղած: Ինչպէս իրանց անունիցն էլ յայտնի է (թերեքմէ, աւելի ճիշտ թերաքեմէ, արարերէն յոգնակի թիւրքման բառի) ծագումով թիւրքման են, դեռ ոչ շատ հին ժամանակներում, այսպէս, երևի, 18-րդ դարում եկել են հարաւ-արեւմտեան Կովկաս և ընդունել մերթ պարսկական, մերթ ռուս հպատակութիւնը նայելով պատմական պայմաններին: Սրանց թուրքման լինելը առաջացանում է նախ իրանց լեզուն, որ շատ է մնան Նօժուտների բարբառին, երկրորդ էլ իրանց կրօնը. սրանք պատկանում են սիւննի աղանդին, թէև ամեն կողմից շրջապատուած են եղել շիիներով: Իրանց արտաքինով նման են Դիարբէքիւրի շրջանում նստած թուրքմաններին:

Գալով բուն Իրանի հողի վրայ ապրող թուրքերի թուին, շատ խախուռ են թաղրութիւններ կարող ենք միայն անել, որոնք սակայն իրանց հիմք ունին պատմութիւնն ու ժողովուրդի արդի

աղագրական դիրքը: Այսինքն՝ կասկած չկայ, որ Իրանի հիւսիսային մասը Մոնղոլների արշաւանքից սկսած մինչև օրս ենթակայ է եղել թուրք տարրի գերիշխանութեան, թէև Խորասանի գլխաւոր քաղաքները, ինչպէս են Մեշհէդ, Նիշաբուր, Սերդեհար ևայլն, կարողացել են միշտ իրանց իրանական ընդթը պահել: Այս դիտողութիւնը արել է Շարդէնը դեռ 17-րդ դարում, և նոյնիսկ 15-րդ ու 16-րդ դարերի իտալացի ճանապարհորդները իրանց տուած տեղեկութիւնների մէջ ասել են նոյնը: Եւ որովհետեւ մինչև այժմ նոյնը մնացել է անփոփոխ, կարծում ենք սխալուած չենք չինի, եթէ Իրանի թուրքերի ընդհանուր թիւը երկու միլիօն հաշուենք, որին կցելով Անդրկովկասի թուրքերի մէկ միլիօնը, ընդամենը բոլոր ազգերէջանների թիւը կը դառնայ երեք միլիօն:

H. Vambery

ԶՐՀԱՆԿԻՐԸ

Լէօն Փոսարիէ'ի

Ո՛չ կոյր և ո՛չ թեազուրկ ծնաւ Փոքր Բիէն, այլ աւելի զէջ՝ առանց հայրենիքի. օրուան մը մէջ փողոցը կորսուած առարկաներու շարքին կը պատկանէր: Աղքատախնամ վարչութիւնը վերցուց ան և զրկեց սոսնտուի պղծթօնական պզտիկ համայնքի մը մօտ, Պալիսօ, ուր հասնելուն՝ ոչինչ գտան իր մասին ըսել, բայց միայն սա. «երկէն չէ»:

Ուրիշ ընկիւք բան չունենալուն՝ մեծցաւ: Երբ հինգ տարեկան եղաւ, դպրոց դրին զինքը՝ կարծես պատժելու համար: Իր ընկերները զինքը ծեծելու և ձեռքէն գնդակները խլելու մասին շատ լաւ կը համաձայնէին իրարու հետ: Չէր գանգատէր, կը զգար, որ մեծ յանցանքը իրենն էր. երկրէն չէր:

Երբ տասներեք տարեկան եղաւ, Աղքատախնամ վարչութիւնը դադրեցուց անոր թոշակը, նկատի ունենալով, որ